

ՔԱՐՈՋԽՕՍԱԿԱՆ

**ԱՄԵՆԱՊԱՏԻ ՊԱՏՐԻԱՐՔ Ս. ՀՕՐ ՔԱՐՈՋԸ՝
ԽՕՍՈՒԱԾ Ս. ՅԱԿՈԲԵԱՆՑ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻՆ ՄԷՋ, ՄԵԾ ՊԱՀՈՑ
ԱՌԱՋԻՆ ՀՍԿՈՒՄԻՆ**

(2 Մարտ, 2023)

Եւ ասէ Հեղի ցՍամուէլ. «Դարձիր անդրէն եւ մնջեա որդեակ. եւ եղիցի եթէ կոչեսցէ զքեզ, ասասցես. «Խօսեալց Տէր, զի լուիցէ ծառայ քո»»:

Հեղի ըսաւ Սամուէլի, «Գնա՛ եւ քնացիր, եւ եթէ դարձեալ քեզ կանչէ, պատասխանէ ըսելով. «Խօսիր Տէր, որովհետեւ ծառայ կը լսէ քեզ»»

(Ա. Թագ. Գ:9)

Այսօրուան մեր քարոզի բնաբանը առնուած է Հին Կտակարանի Դատաւորաց շըրջանի այն հատուածէն, ուր կը նկարագրուի Իսրայէլեացի ժողովուրդին պատահելիք երկու գլխաւոր դէպքերը. առաջինը՝ կը նկարագրէ անկումն ու շնորհազրկումը այդ օրերու հրեաներու մարգարէին եւ քահանայապետին՝ Հեղիի, որ այլեւս կորսնցուցած էր իր դիրքն ու պատիւը նախ՝ յաշս Աստուծոյ եւ ապա ժողովուրդին, իր երկու զաւակներուն ցոփ ու անբարոյ կեանքին պատճառաւ, որուն արդէն Իսրայէլի Աստուածը տուած էր իր ազդարարութիւնը ծեր եւ կէս-կոյր մարգարէին, թէ դժբախտութիւնը պիտի հարուածէր անոր տունն ու երկու արու զաւակները, որոնք կը մեռնէին նոյն օրը եւ այդպէսով քահանայապետութեան իրաւունքը կ'առնուէր Հեղիի ընտանիքէն:

Երկրորդ դէպքը, որ կու գար փոփոխութիւն մտցնելու Հրեայ ժողովուրդի կրօնական ու հոգեւոր կեանքէն ներս, բարձրացումն էր նոր մարգարէի մը՝ Սամուէլի, 10-12 տարու տղեկ մը, որ արդէն իսկ կը գտնուէր Տիրոջ տաճարի սպասարկութեան մէջ, ծառայելով ծերունի Հեղի քահանայապետին:

Գիշեր մը, մինչ փոքրիկ Սամուէլ կը քնանար հրէից Սրբութիւն Սրբոց՝ Ուխտի Տապանակի մասնաբաժնի մուտքին, յանկարծ ձայն մը կը լսէ որ իր անունը կու տար, խորհելով որ Հեղի քահանայապետն էր, կ'երթայ անոր սենեակը, որ կ'ըսէ թէ ինք չէր զինք կանչողը: Այդ գիշեր նոյն բանը կը կրկնուի երեք անգամներ, որուն վրայ Հեղի կը թելադրէ Սամուէլի որ երբ չորրորդ անգամ լսէր նոյն ձայնը, պատասխաներ ըսելով. «Ահաւասիկ եմ Տէր, խօսիր, որովհետեւ ծառայ քեզ կը լսէ»:

Ամբողջ Սուրբ Գրքի տարածքին մենք կը հանդիպինք Աստուծոյ մը, որ կը սիրէ մեզ եւ կը ցանկայ մեր լաւագոյնը: Երբեմն Աստուած մեզի կը խօսի ուղղակիօրէն կամ յաճախ ուրիշներու բերնով. անձին մէջէն անտուն թափառաշրջիկի մը, մուրացկանի մը, մահուան եզրին գտնուող անձի մը եւ կամ ալ յուսախաբ սրտի մը կողմէն, եւ մենք իբր Աստուծոյ ձեռագործներն ու մանաւանդ իբր քրիստոնեաներ, պէտք է այս կամ այն ձեւով պատասխանենք Հայր Աստուծոյ կոչին: Ճիշդ է որ Հայր Աստուած կը խօսի մեզի, սակայն հարցը այն է թէ մենք ո՞րքանով տրամադիր ենք լսելու զինք, ինչպէս Հին Կտակարանը կ'ըսէ. «Այդ օրերուն Աստուծոյ խօսքը հազուադիւս կը լըս-

ւէր»։ Աստուած անպայմանօրէն կը խօսի մեզի, սակայն մենք է որ չենք ուզեր լսել զինք, նման Հեղի քահանայապետին, որ իր ամբողջ կեանքը անցուցած էր Աստուծոյ ծառայութեան մէջ, սակայն ան եւս ուշ պիտի հասկնար Աստուծոյ կանչը, որուն համար ալ պիտի թելադրէր փոքրիկ Սամուէլի պատասխանելու Աստուծոյ կանչին, ըսելով. «Խօսի՛ր Տէր, որովհետեւ ծառադ կը լսէ քեզի»։

Ինչո՞ւ Աստուած պիտի կանչէր Սամուէլը, որ տակաւին փոքրիկ տղայ մըն էր։ Իրականութիւնը այն է, որ Հայր Աստուած կը կանչէ ամէն տարիքի մարդիկ, իր հրաւերները միշտ բաց են բոլորին, խտրութիւն չկայ ծերի կամ երիտասարդի, գիտունի եւ տգէտի, հարուստի եւ կամ աղքատի միջեւ. դասակարգային պատնէշները կը խորտակուին Աստուծոյ ամենագոր կամքին առաջ։ Աստուած կը խօսի, սակայն ի՞նչն է որ մեզ կ'արգիլէ լսել իր խօսքը։ Միթէ չե՞նք ուզեր լսել զինք եւ իր կոչերը։ Թերեւս մենք զմեզ աւելի դրական ձեւով պատրաստելու ենք լաւ լսելու իր կոչը։ Կրնայ ըլլալ որ մենք Աստուծոյ կոչը չենք լսած քանի զբաղած էինք մեր անձնական կեանքերը դրսեւորելու աշխատանքով, որուն համար ալ պատճառաբանութիւններ կը ստեղծենք խուսափելու լսելէ մեր Արարիչը։ Եւ կամ մեր զինք լսել չուզելնուս պատճառներէն մէկը այն է, որ Ան երբեմն մեր կեանքերուն մէջ կարգ մը փոփոխութիւններ կը պահանջէ։

Այդ գիշեր Տաճարին մէջ Հայր Աստուած խօսեցաւ Սամուէլի եւ անոր տուաւ խրոսովեցուցիչ լուրեր, թէ Հեղի քահանայապետի պաշտօնը արդէն վերջացած էր եւ ան պիտի յաջորդէր անոր իբր քահանայապետ եւ մարգարէ։ Սուրբ Գիրքը մեզի կու տայ փոքրիկ Սամուէլի հոգեկան վիճակը, ըսելով թէ ան շատ խռոված էր ատկից։ Սակայն եւ այնպէս միակ միւթթարող լուրը այն էր, որ ինք այլեւս երբեք առանձին պիտի չմընար, այլ Հայր Աստուած միշտ պիտի քալէր իր հետ։ Եթէ մենք ունինք մեր մարդկային կասկածներն ու վերապահութիւնները որոշ հարցերու նկատմամբ, թող վստահ կերպով եւ շուտով պատասխանենք Աստուծային կոչին, ըսելով. «Հոս եմ, Տէր»։ Եւ ի՞նչ է Հայր Աստուծոյ ակնկալածը մեզմէ, եթէ ոչ միայն պատրաստակամութիւն՝ պատասխանելու իր կոչին, «Ահաւասիկ եմ, Տէր»։ Մէջ մը որ փոքրիկ Սամուէլ պատասխանէր այդպէս, Եհովան անոր պիտի տար վերջնական վճիռը իր դատաստանին՝ Հեղիի եւ անոր զաւակներուն մասին, իրենց գործած ահաւոր մեղքերուն համար։

Հաւանաբար, այդ գիշեր փոքրիկ Սամուէլ չկրցաւ քնանալ, որովհետեւ իրեն տրուած պատգամը ծանր էր ու ահագին պատասխանատուութիւն կը պահանջէր։ Առաւօտուն, երբ Հեղի քահանայապետ հարցուց Սամուէլի թէ ի՞նչ ըսած էր Աստուած իրեն, հաւանաբար ան նախ վախցաւ փոխանցելու Աստուծոյ պատգամը անոր, սակայն երբ Հեղի կը սպառնայ իրեն, ան կը պատմէ եղելութիւնը, զոր Հեղի քահանայապետ կը հաստատէ ըսելով. «Թող Տէրը ընէ ա՛յն՝ ինչ որ ճիշդ է»։ Որմէ ետք ամէն ինչ պիտի կատարուէր ճիշդ այնպէս ինչպէս Աստուած ըսած էր փոքրիկ Սամուէլի, Հեղի քահանայապետ պիտի մեռնի ա՛յն օրը՝ երբ առնէ իր երկու զաւակներուն մահուան լուրը, որմէ ետք ամբողջ Իսրայէլ պիտի տեսնէր թէ վերջապէս, յանձինս իրեն պիտի ունենային Աստուածընտիր քահանայապետ մը, որուն պիտի կարենային վստահիլ իրենց ամբողջ էութեամբ։ Ու այս կու գայ մեզի վերջիշեցնելու թէ մենք առաջին հերթին պարտինք ներքնապէս սրբագրելու մենք զմեզ, թէ մեր էական եւ գլխաւոր նպատակը պէտք է ըլլայ ճանչնալ զԱստուած ինչպէս որ է։ «Ահաւասիկ եմ Տէր, խօսի՛ր» Սամուէլի խօսքը կու գայ մեզի թելադրելու թէ Հայր Աստուծոյ հնազանդիլը ամենա-անհրաժեշտ մասն է լաւագոյնս ըմբռնելու Անոր խօսքը։ Ծառան պարտի հնազանդութեամբ մտիկ ընել թէ իր տէրը ի՞նչ կ'ըսէ։

Սիրելի հաւատացեալ քոյրեր եւ եղբայրներ, երբե՛ք մի մոռնաք, որ Աստուծ միշտ մեզի հետ է եւ մեզի կը խօսի զանազան ձեւերով եւ միջոցներով, ու մենք պարտինք ականջալուր եւ պատրաստ ըլլալ ընդառաջելու իր կոչին, մանաւանդ Մեծ Պահոց քառասնօրեայ այս շրջանին, այդպէսով դառնալու արժանաւոր սպասաւորները իր Միաժին Որդւոյն՝ Քրիստոսի Եկեղեցիին։ Եւ թող միշտ քաջութիւնն ու պատրաստակամութիւնը ունենանք պատասխանելու Աստուծոյ, ըսելով. «Խօսի՛ր Տէր, որովհետեւ ծառադ կը լսէ քեզի»։ Եւ քաջ վստահ եղէք սիրելի հաւատացեալներ, որ երբ Երկնայինը բաժին դարձնենք մեր երկրաւոր կեանքին, մենք այլեւս բնաւ նոյն անձերը չենք մնար, եւ թող այս մօտեցումով պատրաստուինք դիմաւորելու տօնը մեր Փրկչի՝ Յարութեան, որ է օրհնեալ այժմ եւ միշտ... Ամէն։

